ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 319-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ԱՆՈՒԻՏԵՏԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
   1) *անուիտետ*՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.
   2) *ապահովագրական ընկերություն*՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
   3) *ապահովադիր (մասնակից)*՝ *ըստ* «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների
   4) *Կենտրոնական բանկ*՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
   5) *Օրենք*՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

ԳԼՈՒԽ 2. ԱՆՈՒԻՏԵՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1. Անուիտետի պայմանագրով ապահովադիրը կամ նրա ամուսինը կամ նրանց լիազորված անձն իրավունք ունեն անուիտետի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը կամ դրա մի մասը մեկ ապահովագրական ընկերությունից (այսուհետ՝ ապահովագրական ընկերություն) փոխանցել այդ փոխանցումը ընդունող մեկ այլ ապահովագրական ընկերությանը (այսուհետ՝ նոր

ապահովագրական ընկերություն), եթե ապահովագրական ընկերությունը տասներկուամսյա ժամանակահատվածում երկու և ավելի անգամ անուիտետ չի վճարել, ինչպես նաև երկու և ավելի անգամ անուիտետի պայմանագրի որևէ այլ խախտում է թույլ տվել: Այս դեպքում, ապահովադիրը կամ նրա ամուսինը կամ նրանց լիազորված անձն իրավունք ունեն իրենց նախաձեռնությամբ միակողմանի լուծել պայմանագիրը՝ ապահովագրական ընկերությունից պահանջելով վճարել մնացորդային գումարը և պատճառված վնասները:

2. Փոխանցում իրականացնելու դեպքում ապահովադիրը պետք է նոր ապահովագրական ընկերության հետ լրացնի անուիտետի ձեռքբերման դիմում և սույն կարգով սահմանված անուիտետի փոխանցման դիմումը՝ համաձայն Հավելված 1-ի, ինչպես նաև ներկայացնի.

1) ապահովագրական ընկերության հետ կնքած անուիտետի պայմանագրի պատճենը
2) անուիտետի հաշվի վերջին քաղվածքը,
3) լիազորված անձի դեպքում՝ լիազորագիր

3. Նոր ապահովագրական ընկերությունը փոխանցման դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնի այն ապահովագրական ընկերությանը:

4. Փոխանցման դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը պարտավորվում է նշված գումարը փոխանցել նոր ապահովագրական ընկերությանը:

ԳԼՈՒԽ 2. ԱՆՈՒԻՏԵՏԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված դեպքում ապահովագրական ընկերության կողմից նոր ապահովագրական ընկերությանը փոխանցվող գումարը հաշվարկվում է իբրև տվյալ ապահովագրական ընկերության հետ կնքված անուիտետի պայմանագրով վճարված ապահովագրավճարների մեծություն (կամ տվյալ ապահովագրական ընկերությանը փոխանցված միանվագ գումար) ներառյալ՝ տասներկուամսյա ժամանակահատվածում երկու և ավելի անգամ չվճարված անուիտետների մեծությունը և պայմանագրով նախատեսված տոկոսները՝ նվազեցրած մինչև փոխանցման պահը արդեն վճարված անուիտետները, ապահովագրության պայմանագրի հետ կապված փաստացի կատարված ծախսերը: Ընդ որում, սույն մասով նախատեսված ապահովագրավճարների փոխանցումը չի համարվում անուիտենտի կողմից դրանց միանվագ ստացում:

6. Փոխանցման դեպքում փոխանցման հետ կապված այդ թվում՝ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման տուժանք չի կարող կիրառվել:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 319-Ն որոշման

Անուիտետի մնացորդային գումարի փոխանցման դիմում

Փոխանցվող անուիտետի պայմանագրի համարը_____

Տվյալ ապահովագրական ընկերության

անվանումը_____

Տվյալ ապահովագրական ընկերության գործունեության հասցեն

_____

Ապահովադրի/անուիտենտի անունը_____

Ապահովադիր/անուիտենտի անձնագրային տվյալներ _____

Ամուսինների անուիտետի դեպքում ամուսնու անունը_____

Ամուսինների անուիտետի դեպքում ամուսնու անձնագրային

տվյալները_____

Լիազորված անձի անուն,ազգանունը_____

Լիազորված անձի անձնագրային տվյալները_____

Ժառանգի(ների) անուն(ներ)ը_____

Ժառանգի անձնագրային տվյալներ_____

Հասցեատեր_____:
[Տվյալ ապահովագրական ընկերությանանվանումը]

Թույլատրում եմ իմ անուիտետի հաշվից փոխանցել _____ՀՀ դրամ
_____:
[Նոր ապահովագրական ընկերության անունը]

Խնդրում եմ նվազեցումը կատարել.
___ անմիջապես
___ սկսած (ամսաթիվ) _____-ից

Նվազեցրած բոլոր միջոցները փոխանցել _____-
[Նոր ապահովագրական ընկերության անվանումը]
ում բացված իմ անուիտետի հաշվին.

_____ _____
Անուիտենտի ստորագրությունը ամսաթիվ